

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

1947 թ. նորաստեղծ ինստիտուտի կազմում հիմնադրվել է Խորհրդային հասարակության պատմության բաժինը, որի առաջին վարիչը ինստիտուտի տնօրենի տեղակալ Մկրտիչ Ներսիսյանն էր (1947–1948): 1948–1951 թթ. բաժնի վարիչ է եղել` Ծատուր Աղայանը, 1951–1980 թթ.` Արշավիր Հակոբյանը:

Խորհրդահայ պատմաբանների առաջնային խնդիրներից էր 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցության խնդրի վերհանումը, ուստի դեռևս պատերազմի եռուն շրջանում` 1943 թ., ՀԽՍՀ ԳԱ նախագահության նախաձեռնությամբ Պատմության ինստիտուտում ստեղծվում է Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ, որը զգալի աշխատանք է կատարում հայ ժողովրդի զավակների մասնակցության վավերագրական պատմությունը ստեղծելու, նրանց փաստաթղթերն ու նյութերը հավաքելու գործում: Պատերազմի տարիներին հրատարակվում են մի շարք գրքույկներ տարբեր ռազմաճակատներում ֆաշիստական բարբարոսներին ջախջախելու վճռականությամբ մարտնչող հայ հերոսների մարտական սխրագործությունների մասին: Հետպատերազմյան շրջանում Ա. Մնացականյանը, Ե. Խալեյանը, Մ. Նալբանդյանը, Ղ. Դալլաբյանը, Ա. Մալխասյանը, Մ. Սահակյանը, Մ. Հակոբյանը և ուրիշներ գիտական հետազոտություններ, հանրամատչելի գրքույկներ ու հիշողություններ հրատարակեցին ռազմաճակատում և թիկունքում հայ ժողովրդի մասնակցության, հայկական դիվիզիաների, պարտիզանական շարժման, հայ հերոսների մասին: Հրատարակված բազմաբնույթ աշխատությունների մեջ առանձնանում է Ա. Մնացականյանի «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում (1941–1945)» ուսումնասիրությունը, որն ընդհանրացված ձևով պատկերացում է տալիս ինչպես պատերազմի առանձին ռազմաճակատներում ու նրա տարբեր փուլերում հայերի մասնակցության, այնպես էլ թիկունքի աշխատանքի, ռազմաճակատին օգնություն կազմակերպելու մասին: Հայրենական մեծ պատերազմին նվիրված աշխատանքների քանակը հետագայում աճեց: Ընդլայնվեց դրանց թեմատիկան, հարստացավ աղբյուրագիտական բազան: Հիմնախնդիրն ուսումնասիրող մասնագետները հրատարակեցին առանձին ռազմաճակատներին, հերոսներին, զորահրամատարներին, պարտիզանական պայքարին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններ: Բաժնի աշխատակիցների կողեկոտիվ աշխատանքի արդյունք են Խորհրդային Միության հայ հերոսներին նվիրված ակնարկների երկու ժողովածուները (հայերեն և ռուսերեն):

1940-ական թթ. վերջերից ինստիտուտի հիմնախնդիրներից մեկը Խորհրդային Հայաստանի պատմության ընդհանրացնող աշխատանքի ստեղծումն էր: Կազմավորվել է այդ աշխատանքը կատարող հեղինակային խումբ` Հ. Էլչիբեկյան, Արշ. Հակոբյան, Վ. Մելիքսեթյան, Հ. Կարապետյան, Ծ. Աղայան և Ա. Մնացականյան կազմով: Խորհրդային Հայաստանի պատմության երեք պրակները լույս տեսան «Ուրվագծեր Խորհրդային Հայաստանի պատմության»

վերնագրով: Խորհրդային Հայաստանի համակարգված պատմության ստեղծման այդ առաջին փորձը կարևոր դեր խաղաց ընդհանուր գիտական կոնցեպցիա մշակելու տեսակետից: Նման տիպի կոլեկտիվ աշխատանքի ստեղծման փորձը հնարավորություն տվեց մեկ առանձին վերցրած ժամանակշրջանի պատմությունը շարադրելուց հետո ձեռնամուխ լինել հայոց ամբողջական պատմության բազմահատորյակի ստեղծմանը: Գործի դրվեցին բոլոր հնարավորությունները, ծրագրվող աշխատանքի մեջ ներգրավվեցին Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Միության նշանավոր պատմաբաններն ու հարակից մասնագիտությունների տեր հեղինակները: Արդյունքում՝ ստեղծվեցին «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության 7-րդ և 8-րդ հատորները (պատասխանատու խմբագիրներ, համապատասխանաբար՝ Օ. Աղայան և Արշ. Հակոբյան):

Բաժնի աշխատակիցներից Հ. Էլչիբեկյանը զբաղվել է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պատմության հարցերով, Արշ. Հակոբյանը և Ս. Խարմանդարյանը՝ խորհրդային հնգամյակների պատմությամբ, Կ. Կոզմոյանը ուսումնասիրեց Խորհրդային Հայաստանի քաղաքները, Գ. Գեղամյանը՝ Հայաստանում ՆԷՊ-ի կենսագործումը, Բ. Օհանջանյանը՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, Գ. Գալոյանը հեղինակեց Մայիսյան ապստամբության և Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ մենագրություններ, Ա. Գրիգորյանը համառոտ շարադրեց Հայաստանի բանվոր դասակարգի, Հ. Ավետիսյանը՝ Հայաստանի և միջազգային երիտասարդական շարժման պատմությունը: Ս. Խարմանդարյանի «Լենինը և Անդրկովկասյան դաշնության ստեղծումը (1921–1923)» ուշագրավ աշխատության (ռուսերեն) մշակումը սկսվել է բաժնում, ապա շարունակվել և տպագրվել Հայաստանի կոմկուսի պատմության ինստիտուտում:

1970-ական թթ. Խորհրդային Հայաստանի պատմության մի քանի հիմնախնդիրներ ուսումնասիրվեցին հիմնավորապես: Վ. Ղազախեցյանն իր երկու գրքերում ամբողջացրեց 1920–1937 թթ. գյուղացիության պատմությունը: Հեղինակն անդրադարձավ գյուղում տեղի ունեցող ագրարային վերափոխումներին, ՆԷՊ-ին, կոլեկտիվացման իրականացմանը և այլն: Վ. Ղազախեցյանի ուսումնասիրությունները գրվել են աղբյուրագիտական հարուստ տվյալների և գրականության քննության հիման վրա:

Հայաստանի հետպատերազմյան ժամանակաշրջանի պատմության առանձին հարցերի ուսումնասիրություններից հիշատակության արժանի են Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությանը և բանվոր դասակարգին նվիրված Գ. Գեղամյանի, Հ. Ազիզբեկյանի, Հ. Հարությունյանի, Ս. Ալավերդյանի և ուրիշների ուսումնասիրությունները: Հ. Հարությունյանն ուշադրություն է դարձրել բանվոր դասակարգի կազմում տեղի ունեցած քանակական և որակական փոփոխություններին, համալրման աղբյուրներին, անդրադարձել բանվորական կադրերի պատրաստման ու որակավորման հարցերին: Հեղինակը ստեղծել է Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի 1938–1960 թթ. ամբողջական պատմությունը, որը կարևոր նշանակություն ունի տվյալ հարցի ուսումնասիրության բնագավառում: Խորհրդային Հայաստանի մշակույթի պատմության ուսումնասիրության գործում զգալի դեր ունի Կ. Խուդավերդյանը, խնդրին նվիր-

ված նրա մենագրությունն ընդգրկում է 1920–1940 թթ.: Հեղինակն ուսումնասիրել է նաև Հայրենական մեծ պատերազմի տարիների հայ մշակույթի պատմությունը և Խորհրդային Հայաստանի մշակութային կապերը: Խորհրդային Հայաստանի վերջին տասնամյակների գյուղացիության և բանվոր դասակարգի պատմությունն ուսումնասիրել են Վ. Հակոբյանը, Ռ. Ազիզբեկյանը: Բաժնում աշխատանքներ են տարվել հայկական Սփյուռքի և հատկապես հայրենադարձության պատմության ուսումնասիրության բնագավառում: Այս ուղղությամբ բաժնում սկսած գործը Հ. Մելիքսեթյանը շարունակել է Երևանի պետական համալսարանում:

1970–1980-ական թթ. Պատմության ինստիտուտում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունների արդյունքում Խորհրդային հասարակության պատմության բաժինը տրոհվել է մի քանի բաժինների՝ Հայրենական մեծ պատերազմի պատմության (բաժնի վարիչ՝ Ա. Սիմոնյան), Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատմության (Վ. Ղազախեցյան), Զարգացած սոցիալիզմի (հետագայում՝ Սոցիալիզմի կատարելագործման) պատմության (Կ. Խուդավերդյան), Արդի հասարակության պատմության (Գ. Գեղամյան):

Խորհրդային վերջին տարում՝ 1991 թ., նորագույն շրջանի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող բաժիններն ունեին հետևյալ կազմերը.

- *Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատմության բաժին.* բաժնի վարիչ՝ Վ. Ղազախեցյան, առաջատար գիտաշխատող՝ Արշ. Հակոբյան, ավագ գիտաշխատողներ՝ Հ. Հարությունյան, Պ. Մայիլյան, Ս. Ղարիբջանյան, Վ. Դավաթյան, գիտաշխատողներ՝ Վ. Մելիքյան, Է. Գևորգյան, կրտսեր գիտաշխատողներ՝ Բ. Թամրազյան, Գ. Վարդանյան:

- *Հայրենական մեծ պատերազմի պատմության բաժին.* բաժնի վարիչ՝ Ա. Սիմոնյան, ավագ գիտաշխատողներ՝ Կ. Հարությունյան, Գ. Աբրահամյան, Ե. Խալեյան, Մ. Սահակյան, Գ. Գրիգորյան, կրտսեր գիտաշխատող՝ Գ. Խաչատրյան:

- *Արդի հասարակության պատմության բաժին.* բաժնի վարիչ՝ Գ. Գեղամյան, առաջատար գիտաշխատող՝ Կ. Խուդավերդյան, Ն. Թավաթալյան, ավագ գիտաշխատողներ՝ Մ. Գրիգորյան, Գ. Մախմուրյան, Վ. Հակոբյան, Ռ. Օհանջանյան, Ա. Մկրտչյան, կրտսեր գիտաշխատող՝ Ա. Խեչումյան, ավագ լաբորանտներ՝ Մ. Չալյան, Հ. Առաքելյան:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո պատմության նորագույն ժամանակաշրջանի հիմնախնդիրների ուսումնասիրությունը դրվեց որակական նոր հիմքերի վրա, զերծ գաղափարական կապանքներից: Վերջինս առավել մեծ խթան հաղորդեց Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների պատմության ուսումնասիրությանը:

Նորագույն ժամանակաշրջանի պատմության համակողմանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցավ արխիվային փակ ֆոնդերի բացումը: Որի շնորհիվ էլ անկախացումից հետո բաժնի աշխատակիցների կողմից հրատարակվեցին փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ: Արժեքավոր է «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (կազմողներ՝ Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան և ուրիշներ), որում հրատարակված նորահայտ արխիվային փաստաթղթերը

լույս են սփռում Հայաստանի առաջին Հանրապետության պատմության մի շարք կարևոր իրադարձությունների վրա: Կարևոր են նաև «Հայաստանը ԱՄՆ պետական դեպարտամենտի փաստաթղթերում 1917–1920 թթ.» (կազմող՝ Գ. Մախմուրյան), «Հայկական բանակը 1918–1920 թթ.» (կազմող՝ Մ. Կարապետյան), «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հունիս)» (կազմող՝ Հ. Սուքիասյան) փաստաթղթերի և նյութերի ժողովածուները:

Վ. Ղազախեցյանի առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվել է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական պատմությանը վերաբերող Աստվածատուր Խաչատրյանի «Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները», Միքայել Թումանյանի «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական պատմություն (1918–1920)» արժեքավոր աշխատությունները, Հ. Սուքիասյանը հրատարակել է հայ-վրացական 1918–1919 թթ. հարաբերություններին նվիրված Մարտիրոս Հարությունյանի նամակներն ու զեկուցագրերը:

Փաստաթղթերի և նյութերի ժողովածուների մյուս խումբը վերաբերում է Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանին: Արժեքավոր է Վ. Ղազախեցյանի կազմած «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը» և «ՀՅ Դաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղաքական վարչության գաղտնիթերցումներում (1920-ական թվականներ)» ժողովածուները: Դրանցում հրատարակված փաստաթղթերի գերակշիռ մասն առաջին անգամն են հանդես գալիս գիտական շրջանառության մեջ և լուսաբանում է ՀՅԴ կուսակցության 1920–1930-ական թվականների պատմության նախկինում անհայտ էջերը: Իրենց բնույթով և բովանդակությամբ գրքերն առաջինն են հայկական պատմագիտության մեջ: Ա. Մելքոնյանի և Վ. Ղազախեցյանի հրատարակած «Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուում ընտրված և վերահրատարակված են 2001–2004 թթ. Մոսկվայում հրատարակված «Совершенно секретно: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934)» հատորներից Հայաստանին ու հայերին վերաբերող նյութերը: Դրանում խորհրդային երկրի պետական անվտանգության մարմինների (Արտակարգ հանձնաժողով, Պետական քաղաքական վարչություն, Միացյալ պետական քաղաքական վարչություն, Ներքգործողկոմատ) 1922–1929 թթ. ամենամսյա տեսություններն են երկրում, այդ թվում նաև Հայաստանում տիրող քաղաքական դրության մասին: Դրանք բացառիկ աղբյուր են հանրապետության սոցիալ-քաղաքական, հասարակական հարաբերությունները, հասարակություն-պետություն առնչություններն ուսումնասիրելու համար: Ս. Ավետիսյանը փաստաթղթերի ժողովածու է հրատարակել 1920-ական թվականներին Հայաստանում Անգլիական օգնության կոմիտեի իրականացրած մարդասիրական և որբախնամ գործունեության վերաբերյալ: Դրանում լուսաբանվում են նաև Անգլկոմի և Ամերկոմի հարաբերություններն ու համագործակցությունը խորհրդային իշխանությունների և Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության հետ:

Կ. Խաչատրյանի և Հ. Աբրահամյանի հրատարակած «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1923–1988)» և «Հայության կոչերն ու դի-

մումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988–1989)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուներում ներկայացված փաստաթղթերում հիմնավորում է այն փաստը, որ խորհրդային ժամանակաշրջանում համայն հայությունը՝ թե՛ Խորհրդային Հայաստանում և ԼՂԻՄ-ում, և թե՛ Սփյուռքում, պայքարել է Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Սույն ժողովածուների տրամաբանական շարունակությունն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության առաջին ամիսների (1991 թ. օգոստոս – 1992 թ. հունվար) վերաբերյալ Հ. Աբրահամյանի կազմած փաստաթղթերի ժողովածուն: Այստեղ տեղ գտած փաստաթղթերը արտացոլում են ԼՂՀ ստեղծման գործընթացը:

2003 թ. ինստիտուտում իրականացված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում նորագույն պատմության խնդիրները շարունակվեցին ուսումնասիրվել հետևյալ բաժինների շրջանակներում.

- Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն (բաժնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ ակադ. Հ. Ավետիսյան)

- Խորհրդային Հայաստանի պատմություն (պ.գ.դ., պրոֆ. Վ. Ղազախեցյան)
- Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն (պ.գ.դ., պրոֆ. Գ. Գեղամյան):

2005 թ. հերթական կառուցվածքային փոփոխությունների արդյունքում վերը նշված բաժիններն ընդգրկվեցին նորաստեղծ Նորագույն պատմության բաժնում, որի վարիչն էր պ.գ.դ., պրոֆ. Վ. Ղազախեցյանը, 2010 թվականից նրան փոխարինեց պ.գ.դ., պրոֆ. Հ. Հարությունյանը:

Նորաստեղծ բաժինը ծավալուն աշխատանք կատարեց Հայաստանի նորագույն պատմության հիմնախնդիրների ուսումնասիրության և նոր աշխատանքների պատրաստման ուղղությամբ: Հասկապես բեղուն է եղել բաժնի վարիչ Վ. Ղազախեցյանի գիտական գործունեությունը: Նրա երկարամյա աշխատանքների արդյունք է «Հայաստանը 1920–1940 թթ.» մենագրությունը, ուր հեղինակը հանրագումարի է բերել իր նախկին աշխատությունները և լուսաբանել մի շարք նոր խնդիրներ: Նոր հայեցակետով, առանց գաղափարական պարտադրանքների ուսումնասիրվել են Հայաստանի խորհրդային շրջանի պատմության առանցքային հարցերը: Աշխատության մեջ նորահայտ վավերագրերի ու գաղտնագերծված տպագրված նյութերի գիտական ուսումնասիրությունների հիման վրա նորովի, ժամանակակից պատմագրության տեսանկյունից լուսաբանվում են Խորհրդային Հայաստանի առաջին քսանամյակի պատմության հիմնահարցերը: Տպագրվել է նույն հեղինակի Հայրենական պատերազմում հայ պարտիզանների պայքարի, Չանգեզուրում Գարեգին Նժդեհի ղեկավարած ազատագրական պայքարի մասին պատմող գրքերը: Վ. Ղազախեցյանի «Հողային հարցը և հողային բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում (1918–1920)» ուսումնասիրությունում արխիվային վավերագրերի և այլ նյութերի հիման վրա լուսաբանվում է Հայաստանի առաջին Հանրապետության ներքին կյանքի կարևոր բնագավառներից մեկը՝ հողային հարցի վիճակը և դրա լուծման ուղղությամբ պետության ձեռնարկած միջոցառումները:

Հրանտ Ավետիսյանն աշխատություններ է հրատարակել Հայաստանի 1917–1918 թթ. պատմության վերաբերյալ: «Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թ. մայիս», «Հայկական հարցը 1918 թ.» մենագրություններում նա բազմաթիվ նորահայտ արխիվային վավերագրերի հիման վրա բացահայտում է 1917 թ. վերջին – 1918 թ. սկզբներին Անդրկովկասում և Հայաստանում տիրող իրավիճակը, անդրադառնում հայկական հարցի արծարծումներին Բրեստ-Լիտովսկում, Տրապիզոնում և Բաթումում, Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերին, Հայոց ազգային խորհրդի և ՀՀ պատվիրակությունների գործունեությանը միջազգային աստիճաններում: Հ. Ավետիսյանն ուսումնասիրություն է հրատարակել նաև Բրեստ-Լիտովսկի տխրահռչակ պայմանագրով Օսմանյան կայսրությանը հայկական տարածքների բռնակցման վերաբերյալ: 2000 թ. Հ. Ավետիսյանի խմբագրությամբ հրատարակվել է «Գրիգոր Հարությունյան. կյանքը և գործունեությունը» գիրքը, ուր բացահայտվում է Գ. Հարությունյանի անհատականությունը, ցույց է տրվում նրա ազգանվեր գործունեությունը:

Համլետ Հարությունյանի հեղինակած ուսումնասիրությունը վերաբերում է Լեոնային Ղարաբաղի 1918–1921 թթ. իրադարձություններին: Փաստական հարուստ նյութի օգնությամբ հեղինակը ներկայացրել է այն պայքարը, որ Արցախի հայությունը մղել է իր ինքնիշխանությունը պահպանելու համար, և թե ինչպես է խորհրդային կուսակցական ղեկավարությունը հայկական այդ տարածքը բռնակցել Ադրբեջանին: Մույն աշխատությունը Արցախի պատմությանը նվիրված հայրենական պատմագիտության առանցքային ձեռքբերումներից է: Տպագրվել է հեղինակի «Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ.», «Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ.» և «Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ.» գրքերը, որոնցում առաջին անգամ ամբողջական ներկայացված են Նոր Բայազետի գավառի ժողովրդագրական պատկերը, վարչատարածքային կառուցվածքը, բնակչության կազմի փոփոխությունները, սոցիալ-տնտեսական վիճակը, հասարակական-քաղաքական ու կրթամշակութային կյանքը, փախստականների ու որբերի տեղավորման, խնամքի կազմակերպման աշխատանքները:

Վահան Մելիքյանի «Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. փետրվար)» մենագրությունում աղբյուրագիտական լայն և հարուստ հիմքի վրա առաջին անգամ փորձ է արվել հայ պատմագիտության ասպարեզում ներկայացնել 1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի քաղաքական կյանքի կարևորագույն հիմնախնդիրը՝ իշխանության հարցը: Վ. Մելիքյանը հեղինակել է նաև այլ արժեքավոր աշխատություններ:

Գայանե Մախմուրյանի ուսումնասիրությունները վերաբերում են Հայաստանի առաջին Հանրապետության միջազգային դրության, արտաքին հարաբերությունների պատմության բազմաթիվ վիճահարույց հիմնահարցերին, Անդրկովկասում բրիտանական և ամերիկյան քաղաքականությանը: Մասնավորապես նրա «Ազգերի լիգան, Հայկական հարցը և Հայաստանի Հանրապետությունը» աշխատությունում (ռուսերեն) քննարկվող հիմնախնդիրները հայ պատմագիտության մեջ առաջին անգամ են ուսումնասիրվում:

Արարատ Հակոբյանն ուսումնասիրություններ է հրատարակել Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանի, քաղաքական կուսակցությունների գործունեության, պարբերական մամուլի պատմության վերաբերյալ: Նրա վերջին ուսումնասիրություններից են «Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում», «ՀՄԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ», «Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ)», «1937 թվականը Հայաստանում» մենագրությունները, ուր ուսումնասիրված են Խորհրդային Հայաստանի նախապատերազմյան շրջանի պատմության բազմաթիվ կնճռոտ հարցեր՝ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի, Կարսի պայմանագրերից, ներքաղաքական հակասություններից մինչև կոմունիստական մենիշխանության հաստատում և քաղաքական բռնաճնշումներ:

Կուսակցական և պետական գործիչների կյանքին ու գործունեությանը նվիրված մի շարք գրքեր է հրատարակել Վլադիմիր Պետրոսյանը: Առանձնապես հիշատակելի են Ստեփան Շահումյանին, Պոռոշ Պոռոշյանին, Անտոն Քոչինյանին, նաև Հնչակյան կուսակցությանը վերաբերող ուսումնասիրությունները: Վլ. Պետրոսյանը հեղինակել է Հայկական հարց խորագրով 3 հատորներ, որոնք ժամանակագրական առումով ընդգրկում են 1828–2015 թվականները: Վ. Պետրոսյանի գրչի արգասիքն են նաև «Գաղտնի բանակ. նրա գաղափարախոսությունը» և «Անդրանիկ Օզանյան և Ստեփան Շահումյան. Ջորավար և կոմիսար (1918 թ.)» գրքերը:

Կլիմենտ Հարությունյանը բազմաթիվ աշխատություններ է հրատարակել Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին հայության մասնակցության մասին: Նա հայերեն և ռուսերեն մենագրություններով ընդհանրացրել է Երկրորդ համաշխարհային պատերազմին հայության մասնակցությանը նվիրված ուսումնասիրությունների արդյունքը: Կ. Հարությունյանի նոր ուսումնասիրություններից են «Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945)» (հայերեն և ռուսերեն), խորհրդաֆինանսական պատերազմին, Մոսկվայի, Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերին հայ ռազմիկների մասնակցությանը նվիրված գրքերը: Նա ուսումնասիրություններ է հրատարակել նաև Հայրենական պատերազմին Լեռնային Ղարաբաղի և Հյուսիսային Արցախի, Ջավախքի և Սյունիքի հայերի մասնակցության, ԽՍՀՄ մարշալներ Հովհաննես Բաղրամյանի, Արմենակ Խանփեդյանցի, Համազասպ Բաբաջանյանի, ինժեներական զորքերի մարշալ Սերգեյ Ազանովի, ԽՍՀՄ հերոս Իշխան Մարիբեկյանի գործունեության մասին: Կ. Հարությունյանը հեղինակ է նաև «Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.» աշխատության:

Գոհար Խաչատրյանի «Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» ուսումնասիրության մեջ լուսաբանվում է Հայրենական պատերազմի տարիներին թիկունքի աշխատավորների հայրենանվեր գործունեությունը, արդյունաբերության՝ պատերազմի պայմաններին համապատասխան վերակառուցման և հետագա զարգացման հարցերը:

Կարեն Խաչատրյանի «Հայ ժողովրդի մեծ բարեկամը՝ Ն.Ի. Ռիժկով» աշխատությունը նվիրված է 1985–1991 թթ. ԽՍՀՄ կառավարության ղեկավար, ՀՀ ազգային հերոս Նիկոլայ Ռիժ-

կովի անգնահատելի գործունեությանը 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքները վերացնելու հարցում: Հեղինակի «Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ.» մենագրությունում արխիվային բազմաբնույթ փաստաթղթերի և վավերագրերի, մամուլի հրապարակումների, թեմային առնչվող պատմագիտական գրականության լայն հենքի վրա խորությամբ ուսումնասիրվել և նորովի լուսաբանվել են Հայաստանի խորհրդայնացման, Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական, միջպետական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության բազմաթիվ հիմնախնդիրներ: Դրանք ներկայացվում են տարածաշրջանի, Հայաստանի և Ռուսաստանի 1920–1922 թթ. պատմության ընդհանուր հենքի վրա: 2013 թ. հոկտեմբերին Երևանում հրավիրված «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովում Կ. Խաչատրյանը հանդես է եկել «Հայաստանի Երկրորդ (Խորհրդային) Հանրապետության պատմության հիմնահարցերի ուսումնասիրության արդի վիճակը» թեմայով ուշագրավ զեկուցմամբ: Կ. Խաչատրյանի երկարատև գիտական աշխատանքի արդյունք է «Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922–1991 թթ.)» արժեքավոր մենագրությունը: Նրանում հեղինակը առաջին անգամ հայ պատմագրության մեջ ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման և փուլային զարգացման պատմության ընդհանուր համատեքստում բացահայտում է Խորհրդային Հայաստանի արդյունաբերության և գիտության ներդրումը ԽՍՀՄ ՌԱՀ-ում խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում: Կ. Խաչատրյանը հեղինակ է նաև «Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները (1920–1930 թթ.)» ուսումնասիրության (համահեղինակներ՝ Համո Սուքիասյան, Գեղամ Բաղայան), որտեղ փաստական հարուստ հիմքի վրա ամբողջական լուսաբանված է 1920–1930-ական թվականներին Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները: Աշխատանքը պատկերացում է տալիս Հայաստանի ներկա սահմանների ձևավորման ընթացքի մասին: Գրքին կցված է նաև երկու քարտեզ:

Հրանտ Աբրահամյանը բազմաթիվ ուսումնասիրություններ է հրատարակել Արցախի պատմության վերաբերյալ: Նրա «Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901–1933)» աշխատությունում հայ պատմագրության մեջ առաջին անգամ արխիվային հարուստ նյութերի և գրականության հիման վրա շարադրված է 1901–1933 թթ. Արցախում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադարձությունները և այդ ժամանակաշրջանում Արցախի թեմի ձեռնարկումները: Հ. Աբրահամյանը ուսումնասիրություններ է հրատարակել նաև Արցախի 18–19-րդ դարերի պատմության, Արցախի ազատագրական պայքարի մերօրյա փուլի, ԼՂՀ սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի վերաբերյալ:

Ռուբեն Ազիզբեկյանը «Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն» գրքում առաջին անգամ լուսաբանել է գորբաշովյան վերակառուցման տարիներին Հայաստանի դրությունը, ՀՀ անկախացման գործընթացը, սոցիալ-տնտեսական դրությունը:

Ամատունի Վիրաբյանի «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. հասարակական-քաղաքական կյանքը 1945–1957 թթ.» աշխատությունում հայ պատմագիտության մեջ առաջին անգամ համակողմանի ուսումնասիրվել են Հայաստանի հետստալինյան ժամանակաշրջանի առաջին տարիների պատմության կնճռոտ հարցերը:

Ստեփան Ղարիբջանյանի «Գիտությունը Հայաստանում Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945)» աշխատության մեջ հեղինակը արխիվային բազմաբնույթ փաստաթղթերի, մամուլի հրապարակումների և գրականության լայն հենքի վրա ուսումնասիրել և ներկայացրել է ՀԽՍՀ գիտության կազմակերպման և զարգացման խնդիրները պատերազմի ընթացքում: Առանձնահատուկ ներկայացվում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ստեղծման և կայացման պատմությունը, դրանում հայ անվանի գիտնականների և մտավորականների բացառիկ դերը: Ս. Ղարիբջանյանը հեղինակել է նաև «Հայաստանի գիտական մտավորականությունը» աշխատանքը:

Գուրգեն Վարդանյանը «Մշակույթը Հայաստանի առաջին հանրապետությունում 1918–1920 թթ.» ուսումնասիրությունում արխիվային փաստաթղթերի, մամուլի, հուշագրությունների և գիտական ուսումնասիրությունների օգտագործմամբ քննարկման առարկա է դարձրել ՀՀ օրոք միջնակարգ և բարձրագույն կրթության, մշակութային կյանքի կազմակերպման խնդիրները:

Մուրադ Կարապետյանի ուսումնասիրությունները վերաբերում են հայ ժողովրդի մասնակցությանն Առաջին համաշխարհային պատերազմին և Հայաստանի առաջին Հանրապետության բանակին: Մ. Կարապետյանի «Հայազգի զինվորականները ռուսական բանակում (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)» աշխատությունում ներկայացված են ռուսական բանակի մի շարք հայազգի զինվորականների՝ գեներալների և սպաների ռազմական կենսագրությունները, ռուսական զորքերի տարբեր զորատեսակների կազմում անցած մարտական ուղին և սխրանքները, վերջիններիս կատարած դերը հայկական ազգային զինուժի ստեղծման գործում: Մ. Կարապետյանն ուսումնասիրություն է հրատարակել նաև ռազմական պատմության աղբյուրագիտության վերաբերյալ:

Լիլիթ Ջաքարյանի «Խորհրդահայ գյուղի մայրամուտը» ուսումնասիրությունում արխիվային վավերագրերի, վիճակագրական նյութերի, մամուլի և գրականության օգտագործմամբ համապարփակ քննության են առնված խորհրդահայ գյուղի վերջին տասնամյակի սոցիալ-տնտեսական պատմության առանցքային խնդիրները: Լ. Ջաքարյանը «Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումն ու զարգացումը Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունում համակողմանի ուսումնասիրել է ՀՀ ՏԻՄ համակարգի ձևավորումն ու կայացման երկու տասնամյակի պատմությունը, ձեռքբերումները ու առկա խնդիրները:

Վահագն Ազյանը ուսումնասիրություններ է հրատարակել Հայաստանի երրորդ Հանրապետության արտաքին քաղաքականության, հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ:

Մարինա Չալյանի «Արցախյան շարժման լուսաբանումը ԱՄՆ հայկական անգլալեզու մամուլում (1988 թ. փետրվար – 1990 թ. օգոստոս)» աշխատությունում սփյուռքահայ մամուլի հրապարակումների լայն հենքի վրա ուսումնասիրվել է ԱՄՆ հայկական համայնքում Արցախյան ազատագրական շարժման նկատմամբ գոյություն ունեցող տարբեր մոտեցումները և գնահատականները:

Սուրեն Ավետիսյանի «Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918–1930 թթ.» մենագրությունում արխիվային նորահայտ փաստաթղթերի, թեմային առնչվող պատմագիտական գրականության հիման վրա ուսումնասիրվել և լուսաբանվել է Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի իրականացրած մարդասիրական և որբախնամ գործունեությունը:

Համո Սուքիասյանն ուսումնասիրություններ է հրատարակել Խորհրդային Հայաստանի 1920–1922 թթ. դիվանագիտական կապերի, Հայրենական պատերազմի տարիներին և հետպատերազմյան առաջին տասնյակներում Հայկական ԽՍՀ Շահումյանի (Բերիայի անվան) շրջանի բնակավայրերի պատմության վերաբերյալ: Հ. Սուքիասյանի «Խորհրդային Հայաստանի երգիծական մամուլը 1920–ական թվականներին» ուսումնասիրությունում (համահեղինակ՝ Նարինե Երանոսյան) քննության է ենթարկվում 1920-ական թվականներին Խորհրդային Հայաստանում հրատարակված երեք երգիծական պարբերականների («Շեշտ», «Զուռնա», «Կարմիր մոծակ») հիմնադրման, ընթացքի և հրատարակության դադարեցման հանգամանքները:

Վերջին տարիներին բաժնում ուսումնասիրություններ են կատարվում նաև առօրեական պատմության վերաբերյալ՝ խնդիր ունենալով առավել համակողմանի և ամբողջական լուսաբանել Խորհրդային Հայաստանի պատմության մինչ այժմ չուսումնասիրված հարցերը: Բաժնի ասպիրանտ Գագիկ Ժամհարյանը հրատարակության է պատրաստել «Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի առօրեականության պատմության դրվագներ (1920–1930-ական թվականներ)» աշխատությունը:

Բաժնի ուժերով պատրաստվել և հրատարակվել է «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի IV հատորի առաջին (1918–1945) և երկրորդ (1945–1991) գրքերը:

Տարիների ընթացքում բաժնի ձեռք բերած նշանակալի արդյունքներն են նաև համապետական և միջազգային գիտական միջոցառումներին բաժնի աշխատակիցների մասնակցությունը: Դրանց շարքում նշելի է ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված (հանրապետական), 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 90-ամյակին նվիրված (հանրապետական), Գարեգին Նժդեհի գործունեությունը Սյունիքում (հանրապետական), 1918 թ. մայիսյան հերոսամարտերին և Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման 85 և 100-ամյակներին նվիրված (հանրապետական և միջազգային) միջոցառումները և այլն:

Բաժնի գիտական աշխատանքներն իրականացնում են. բաժնի վարիչ՝ գլխավոր գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Հարությունյան, գլխավոր գիտաշխատող՝ պ.գ.դ. Կ. Հարությունյան, առաջատար գիտաշխատողներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Հակոբյան, պ.գ.դ. Գ.

Մախմուրյան, պ.գ.դ. Հ. Աբրահամյան, պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Պետրոսյան, ավագ գիտաշխատողներ՝ պ.գ.թ., դոցենտ Ռ. Ազիզբեկյան, պ.գ.թ., դոցենտ Լ. Զաքարյան, պ.գ.թ. Գ. Վարդանյան, պ.գ.թ. Ս. Ղարիբջանյան, պ.գ.թ., դոցենտ Հ. Սուքիասյան, պ.գ.թ., դոցենտ Ս. Ավետիսյան, ավագ լաբորանտներ՝ Լ. Սարգսյան, Լ. Գրիգորյան, Ն. Մովսիսյան, ասպիրանտ՝ Ա. Ամիրբեկյան: